

Թիւնճի 1655ին Թոգատէն Պոլիս գալէ վերջ թերեւս էջմիածին գացած և Յակոբ Զուղայեցի կաթողիկոսէն եպիսկոպոս ձեռնադրուելէ ետք, կրկին իբր նուիրակ ժողովարարութիւն ըրած է: Հաւանօրէն Յակոբ կաթողիկոս Զուղայեցիէն 1662 Յունուար 12ին Լեհաստանի Հայոց իբր «սիրելի եւ հաւատարիմ որդի» զըրկըւած Յովհաննէս վրդ.ը, էջմիածինի պարտքին համար ժողովարարութիւն ընելու և միւսոն բաժնելու համար (Ալիշան, Կամենից, էջ 257—258), նոյնինքն Յովհաննէս Թիւթիւնճի վարդապետն էր, որ փոխանակ էջմիածին դառնալու՝ Պոլիս եկած էր, լու գումար մը հաւաքած, ինչպէս կ'ըսէ Օրմանեան (Ազգապատմ, էջ 2531), առանց ճշգրտու թէ ուրկէ՝ հաւաքած էր այդ դրամը:

Զամիշեան, Հրանտ Ասատուր և այլք նաև կը հաստատեն, թէ անիկա նուիրակութեան դրամները իւրացուցած և հարստութեամբ Պոլիս եկած էր:

Այնպէս որ սխալած չենք ըլլար, եթէ խորհինք թէ Յովհաննէս Վարդ. Թիւթիւնճի Լեհաստանէն էր, որ Պոլիս կը հասնէր Ղազար Սեբաստացիի պատրիարքութեան տետն, երբ Ղազարի նկատմամբ սկսած էին դժգոհութիւնները և կուսակցական հակառակութիւնները:

Յովհաննէս Թիւթիւնճի այս նպաստուոր մըթնոլորտը փորձեց օգտագործել ի նպաստ իր պատրիարքացման: Եւ այն, իր դրամական միջոցները արամադրելով իր կողմը շահեցաւ Թըլթըլեանները, որոնց պետը իրեն հայրենակից վանեցի Աստուածատուր երէցն էր: Յովհաննէս Թիւթիւնճի այս երկցին հետ Բէօփիւլիօղլու վէպիրին ետեւէն Սիլիվրի գնաց, երբ Մաճուրոն դէմ պատերազմին պատճառով ան նորէն ճամբայ ելած էր, և հոն յաջողեցաւ կաշառքով պատ-